ՆՈՐ-ԴԱՐ

№ 216 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 22 Դեկտեմբերի 1888 Հինգշաբթի 22 Դեկտեմբերի ՀԻՆԳ ԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 216

Տարեկան 10 րուբլի, վեց ամսուան՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.
Բաժանորդագրուելի են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի ազն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունուում են ամեն ժողովուրդից։ Յայտարարութիւնների գումարն 2 կ., բոլշաճների համար կրկնապատիկ։

Խմբագրութիւնը կ՚ստանայ և սեպհական հեռագիրները

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսեալ։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում Ննջեայ «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱ ԹԵՐԹ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԱՌԱՋԻԿԱՑ 1889 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Վեցերորդ տարի)

Կը հրատարակուի նոյն ձեւով և ծրագրով

Խմբագրութիւնը կ՚ստանայ և սեպհական հեռագիրները

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսեալ։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում Ննջեայ «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Թափանցած յօրելեանի առթիւ։

Քրոնիկոն. — Լուրեր։ Նամակ խմբագրին (3 հատ)։ Շամշադինի վիճակի հայերը։ Մի նոր ախտաստեղծ։

Դպրութակցութիւններ. — Սեբաստիա։ Զալալ-Օղլի։

Քաղաքական. — Քաղաքական լուրեր։

Թատրոն և լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագիրները։

Յայտարարութիւններ։

ԹԱՓԱՆՈՒԱԾ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒ

—

Այս տարի Գաբրիէլ Սունդուկեանցի գործունէութեան քսան և հինգ տարին լրանալով, երբև Թատերագիր, օրոշուած էր այսօր՝ դեկտեմբերի 22-ին հանդիսաւոր կերպով տօնել յարգելի յօբելեարի քսանհինգ ամեակը։ Միևնոյնը պիտի տօնէին և գաւառական շատ քաղաքներում, պարտ ու պատշաճ կերպով։

Այդ մասին մենք առաջարկութիւնները էինք արել իւր ժամանակին և յաջող գտել, որ յարգելի յօբելեարի յօբելեանը տօնուի ներկայացումներով, երեկոյթներով... և դրանց եկամուտները յատկացուին դպրոցներին։ Մեզ հասած տեղեկութիւններից յայտնի է, որ արդէն մի քանի տեղերում պեկ. 22-ը տօնելու պատրաստութիւնները տեսել են և երևի կը տօնեն, թէպէտև այդ յօբելեանի տօնախմբութիւնը խանգարուած է և, ինչպէս գիտեն ընթերցողները, խանգարողը ինքը յօբելեարն է, որ չկամեցաւ Թոյլ տալ տօնելու իւր քսանհինգ ամեակը։

Մեր մէջ յօբելեանները թէպէտև նոր երևոյթներ են, բայց երկնց յօբելեանները տօնել տալու ցանկացողների թիւը սկզբան է։ Ո՛վ չի ցանկալ, որ իւր աշխատութիւնը գնահատուի և այդ աշխատութիւնը գնահատողներից յարգ ու պատիւ ստանայ։ Գէթ շատ բնական և մարդկային ցանկութիւն է։ Մեր Թատերագիրը Գաբրիէլ Սունդուկեանցը չկամեցաւ այդ։ Ինչմէ չը-

կամեցաւ, այդ արդէն երկրորդական խնդիր է։ Մենք մեր պատճառը կատարելով այսօր չնորհաւորում ենք յօբելեարին երբև հայոց Թատերագրի, որ իւրովհանն աշխատել է հայոց Թատրոնի համար, ոչնչէ նեղութեան օգուտ չտպասելով այդ գործից, կրել է նեղութիւնները, որոնք անբաժան են Թատրոնից և Թատրոնական կռիւից։

Անտարակոյս այնտեղ, որտեղ կամեցել են կատարել յօբելեանի տօնը կամ մի օր և է կերպով մասնակից լինել այդ տօնախմբութեան, մտքով կը կատարեն և կը չնորհաւորեն յօբելեարին։

Յօբելեարից սպասում ենք, որ այդ տօնախմբութեան առթիւ իւր նոր Թատերական երկը՝ «Ամուսինները»-ը կրնծայէ հասարակութեան, այսինքն այնպէս կանէ, որ այդ կօմեդիան ներկայացնեն։

«Ամուսինները» կօմեդիան չենք կարգացել, որ նրա արժանաւորութեան մասին մի բան ասենք. բայց մի արժանաւորութիւն ունի նա, որից զուրկ են յօբելեարի միւս գրեթէ բոլոր կոմեդիաները։ «Ամուսինները»-ը գրուած է գրական լեզուով, սրամիտ ընդհանուրին հասկանալի, ապագայ ունեցող լեզուով. հետևաբար նրա մէջ յայտնուող անձերն էլ երևի ընդհանուրին հասկանալի և ծանօթ տիպեր կը լինեն։

ՔՐՈՆԻԿՈՆ

«Кавк.» Թերթի պաշտօնական բաժնում հրատարակուած է.—«Թիֆլիսում չտեսնուած խիստ ցուրտ լինելու պատճառով, որի մէջոցին ցրտերն այնքան սաստկացան, որ նոյն իսկ 14°-ի հասան, երկրիս կառավարչապետը ուղղագրութիւն գարձրեց Թիֆլիսի խեղճ գաստակալքի գրութեան վրայ, որ մէջոց չունի վառելիք ձեռք բերելու՝ վառելիքի գները բարձր լինելու պատճառով։

Այդ պատճառով նորին պայծառափայլութիւնը յայտնի գումար է տուել քաղաքի ամենաաղքատ ընտանիքների անդամների համար տաք հագուստ գնելու համար»։

—

Անցեալ հոկտեմբեր ամսին, վեհափառ կաթողիկոսը Թիֆլիսում եղած ժամանակ, քաղաքիս խորրուել Թաղի հայ բնակիչները մի խնդրագրով դիմում են Նորին Վեհափառութեան և խնդրում, որ հրամայէ բանալ մի դպրոց, որի կարիքը նրանք շատ զգում են։ Խորհուրդները ընդհանրապէս չգաւառը են, դպրոց բանալու միջոց չունին, խնդրում են վեհափառի հայրական հոգածոտութիւնը այդ մասին։

Վեհափառը խորհուրդների խնդիրն ընդունելով, իսկոյն և եթ մի կոնդակով հրամանագրում է բանալ Խորհուրդի Թաղում խնդրած դպրոցը՝ ապահովեցնելով այդ դպրոցը Տարին Թաղի Քամոյենց եկեղեցու գումարներից մաս հանելով։

Տարին վերջանում է, մինչև այժմ Խորհուրդում գալոց բանալու մասին ոչինչ չէ լսուում, Թէպէտև Խորհուրդները սպասում են։

—

ԵՐԵՒԱՆՈՒՄ, դեկտեմ. 6-ին տեղի է ունեցել Երևանի բերդում բանտարկուածների համար ուսումնարանի բացումը։ Ուսումնարանի համար, ինչպէս հաղորդում են «Кав.»-ին, յարմարեցրած է մի բաւական մեծ և յարմարաւոր սենեակ, որի մէջ կարող են 30—35 հոգի նստել։ Սովորելու ցանկութիւն յայտնել են բանտարկեալներից 23 հոգի Հայ և 30 հոգի Թուրք. պէտք է աւանդուի հայոց լեզու, ռուսաց լեզու, հայոց կրօն—հայերին, իսկ Թուրքերին, ռուսերէն և մահմեդական կրօնը—Թուրքերին։

—

Դեկտ. 20-ին, երեքշաբթի կէսօրից յետոյ, ժամը 3-ին, մի ձիաւոր Թիֆլիսին մօտիկ Շահնազարի ուխտատեղի բարձրութեան տակ, Քուրդիս-Թիւլէի կոչուած գիւղի առաջ գտնուող դաշտի վրայ մի զարհուրելի տեսարանի ականատես է եղած։ Ձիաւորը տեսնում է, որ Քուրդիս-Թիւլէի գիւղից դուրս է վազում մի մեծ և ահռելի չոան բերանումը մի ինչ-որ, այդ ինչը այնքան մեծ է լինում, որ մէկ մասը գետնի վրայ կախ ընկած է Թւում։ Շունը դէպի ոչխարների հօտը դիմելով, մօտենում է ձիաւորին և սա տեսնում է զարհուրանքով չոան բերնում մի 2½ տարեկան աղջիկ։ Շունը բռնած լինելով խեղճ երեխայի վզից, քաշ է տալիս նրան գետնով, այնպէս որ երեխայի ոտքերը գետնի ձիերը սրբում են եղել։ Գիւղացիները պատահած Թշուառութիւնն լսանալով, զէնքով, հրացանով և դաշանակներով վրայ են հասնում, բայց չեն կարողանում ձէ չանը սպանել և ոչ էլ խեղճ փոքրիկ աղջկան ազատել։ Շունը բերնից ձգում է երեխային և փախչում հեռու, իսկ երեխային գտնում են արդէն խեղդուած։ Շունը մօտակայ ոչխարների հօտին էր պատկանում և հովուի ասելով, կատաղած էր։ Գիւղացիները կատաղած ծեծեցին հովուին։

—

Այն մէջոցին, երբ քաղաքում տարածուած են զանազան վարակիչ և վտանգաւոր հիւանդութիւններ, շատ կարևոր և անհրաժեշտ է ամենախիստ հսկողութիւններ ունենալ բաղանիքների վրայ, որովհետև բաղանիքների ամենամօտիկ անմաքրութիւնից կարող է իւրաքանչիւր մարդ էլ վարակուել։ Դժբաղդաբար քաղնիքի մէջոցով վարակուելու դէպքեր հաղուագիւտ չեն։ Այսպէս օրինակ, «Тиф. Лист.»-ին հաղորդում են, որ մի տիկնին անցեալներս գնում է բաղանիքներից մինը և լողարանում լողանալուց յետոյ վերադառնում է տուն և սաստիկ ծաղիկ հիւանդութեամբ բռնուում, այնպէս որ անյուսալի դրութեան մէջ է ընկնում։ Հարկաւոր է ամենախիստ հսկողութիւն ունենալ բաղանիքների վրայ։

—

Դեկտեմբերի 16-ին կայացաւ Կովկասի բժշկական ընկերութեան ընդհանուր ժողովը, ուր վճռաբանութեան գլխաւոր առարկան եղաւ Թիֆլիսում տարածուած վարակիչ հիւանդութիւնները։ Բժշկական ընկերութիւնն պարտաւոր է օգնութեան հասնելու, բայց ինչ միջոցով—ոչ ոք չկարողացաւ մի որոշ բան ասել։ Հարկաւոր է ճիշդ տեղեկութիւններ ստանալ հիւանդութիւնների մասին քաղ. բժիշկ Գլաւացիուց, իսկ Գլաւացիկին գանգատւում է, որ իրեն տեղեկութիւններ չեն հաղորդում բժիշկները, ուստի ինքը անկարող է հիւանդների մասին տեղեկութիւն հաղորդել, այլ միայն մեռնողների մասին կարող է. ուստի հարկաւոր է դիմել քաղ. խորհրդի աջակցութեան։ «Աւելի շատ և մանրամասն տեղեկութիւններ ենք ստանում պարսկից, Վենետկից և այլ գլխաւոր քաղաքների առողջական դրութեան օրական հաշիւների մասին, քան մեր քաղաքի ամսական հաշուի մասին», երբեմն ասաց բժիշկներից մինը։ Յարգելուց և մի խնդիր, Թէ վարակիչ հիւանդութիւնների տարածուելու միջոցին կարելի է ծաղիկ պատուաստել։ Այդ մասին չվճռեցին. հաստատապէս կարելի է։

—

Դեկտ. 10-ին, երեկոյեան ժամը մօտ 8-ին, քաղաքիս 5-րդ քաղաքամասում, Բագրատիօն կոչուած փողոցում բնակուող մի երիտասարդ Թեթևաբարոյ կնոջ բնակարանը մտնելով մի, մինչև այժմ անյայտ մնացող մարդ, սրբճանակի մի գնդակով հարուածում է այդ կնոջը։ Գնդակը մտել է կնոջ գլխից և վզից դուրս է եկել։ Կնոջը մերձ ի մահ տարան հիւանդանոց։

—

Դեկտ. 21-ին ստացանք Լուսիայի պօստայ. եբևանի պօստը չստացուելու այդ օրը։

—

Դեկտեմբերի 19-ին Թիֆլիսի քաղ. խորհուրդն իւր հերթական ժողովի մէջ գրաղուեցաւ կոմս Լօրիս-Մելիքեանի մահուան առիթիւ յարուցուած խնդիրներով։ Քաղաքագլխի պաշտօնակատար պ. Իզմայլեանը մեծ համակրանքով խօսեց նրա մասին և առաջարկեց քաղ. խորհրդին որոշել, Թէ ինչ եղանակով պէտք է պատուել հանգուցեալի յիշատակը։ Քաղաքային խորհուրդը հանգուցեալի յիշատակը պատուելու համար ոտքի ելաւ և միաձայն որոշեց. 1) Հոգեհանգիստ կատարել. 2) Հանգուցեալի ընտանիքին յայտնել քաղաքիս ժողովրդի ցաւակցութիւնն և հանգուցեալի աճիւնները Թիֆլիսում հողին յանձնելու մասին ցանկութիւնը. 3) Թաղմանը ներկայ լինել քաղ. խորհրդի ամբողջ Իմբով. 4) Դագաղի վրայ դնել պսակ և 5) Նիստը փակել։ Քաղաքային խորհրդի հետևեալ նիստը լինելու է հինգշաբթի, դեկտեմբերի 22-ին։

—

ՍՂՆԱԽԻՑ հաղորդում են տեղական ուս Թերթերին, որ ցուրտը յանկարծ վրայ հասնելով, յանկարծակի է բերել գիւղացիներին։ Ամեն տեղ ձիւնը մի քանի արշին խորութեամբ ծածկել է և կէս-դէպ-ձիւնը փակուած մնացել են գոմերում և ախոռներում, իսկ Ամեռուայ պաշար էլ Կախէթում շատ քիչ կայ այս տարի։ Նռենիները ու ծերանենիները տրաք-տրաքուած են և գարնան անշուշտ կը չորանան։ Ձանապարհները փակուած են. Ջրաղացների Ջրերը տառած են, ուստի մեծ պահասութիւն է զգացւում մթերքների։

—

Կուբ գետի վրայ սառուցը կտրուելով, Մուշտայիդի մօտ կանգնած տօփերը քշում բերում է վանքի մօտ և տօփերի ուժգին հարուածներին չդիմանալով՝ Ջրօրհնէքի համար կառուցած վանքի բակից դէպի գետը տանող փոքրիկ կամուրջը Ջարդուում է և Ջրի հոսանքը քշում տանում է։

—

Քաղաքիս Մխալչեան արհեստագիտական ուսումնարանը, իւր կանոնադրութեան համաձայն, պատուէրներ է ստանձնում իւր արհեստանոցներում կատարելու համար։ Շատերը դիմում են իրենց պատուէրով այդ ուսումնարանին։ Այսպէս օրինակ, ուսումնարանի ատաղձագործական բաժնում միայն պատրաստած է 986 ր. 75 կոպէկի իրեղէն, որից դուրս գալով նիւթերէնի վրայ գործադրած ծախսը, զուտ արդիւնք, «Тиф. Лист.»-ի ասելով, մնացել է 512 ր. 44 կոպէկ։ Այդ օգտի մի մասը, կանոնադրութեան զօրութեամբ, գործադրւում է աշակերտների և վարպետների օգտին։

—

Մայրաքաղաքի Թերթերի ասելով, կազմուում է մի նախագիծ, որով քաղաքներում և գաւառներում ծառայութեան մտնելիս բժիշկները պիտի ենթարկուին առանձին քննութեան։ Մտադրութիւն կայ այսուհետև արքունի ծառայութեան մտնող բոլոր բժիշկներին ենթարկել բժ.

կան. XIII դ. 471 յօդուածի պահանջած քննութեան։

—

Գուդաուրի կայարանից դեկտեմբերի 20-ին ստացուած հեռագրից երեւում է, որ ռազմա-վիրական ճանապարհը բաց է, բայց ուսական պօստը ընդունած է Բօստով-Վլադիկաւկասեան երկաթուղու ճանապարհի վերայ մեծ ձիւների պատճառով։

—

Ինչպէս իւր ժամանակին յայտնել ենք, Թիֆլիսի քաղ. վարչութիւնը պ. Ղորղանեանցին Թոյլ էր տուել նշ. վօրոնցովի արձանի մօտից, Աէճալեան փողոցով, մինչև երկաթուղու կայարանը ձիաքաշ երկաթուղի շինելու, ինչպէս երեւում է, այժմ գործը բաւական դժուարանալու է, որովհետև Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը չէ համաձայնում իրեն պատկանող գետնի վրայից ձիաքաշի նոր գիծը հրապարակ անցկացնելուն Թոյլ տալ։ Այժմ Ղորղանեանցը հարց է յարուցել, որ քաղ. վարչութիւնը կարող է երկաթուղային վարչութեան ստիպելու, որպէս զի կրկին, տեղական ուսուցիչներից մէկի ասելով, երկրորդ Մալականեան փողոցը շինուի, ինչպէս առաջ էր, և երկաթուղու վարչութիւնից խլուի այդ փողոցի մի մասը։

—

Ինչպէս լսւում է, հանգուցեալ Լօրու Մելիքեանի մարմինը Թաղելու են Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու բակում, Շելկովնիկեանի գերեզմանի մօտ։ Ինչպէս յայտնի է, նոյն բակում Թաղուած են նաև Ցէր-Ղուկասեանը, Լազարեանը, Այվազովսկին և այլն։

—

Թեղուտցիներին ազատող Թիֆլիսի շրջակային վարչութիւնն անցեալներն ընդհանուր ժողով էր կազմել, բայց ժողովը չէր կայացել անդամների չը գալու պատճառով։ Ընկերութեան ընդհանուր ժողովը երկրորդ անգամ պիտի կայանայ դեկտեմբերի 27-ին, Թիֆլիսի արհեստագիտական ուսումնարանի դահլիճում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

— . . . Խմբագիր. Իմացել եմ, որ «Նոր Դար»-ի ձայնը լսում են և նա չի խնայում իւր օգնութիւնը զրկուածներին, կարօտեալներին, գաղաքիս մի յայտնի ընտանիք, վեց հոգուց բազկացած, այժմս ապրելու միջոց չունի և ոչ էլ մուրալ կարող է։ Հարկաւոր է չորս երեխաներին կերակրել, ցուրտ բնակարանը տաքացնել, հարկաւոր է կնոջը պահել, մեով բանիւ տան կարիքները հոգալ, բայց տան տղամարդը, որ աստիճանաւոր է, անսպասելի պաշտօնից արձակուելով, ոտնկից զրկուած է, ապրուստի էլ ուրիշ աղբիւր չունի։ Ձեզ եմ դիմում... խմբագիր, և խնդրում, որ յանուն մարդասիրութեան հրապարիկ բարեգործ մարդկանց նպաստներով օգնելու անսպաս անել դրութեան մէջ ընկած հայ ընտանիքին, մինչև որ տան տղամարդը պաշտօն կը գտնէ։

Եթէ իմ խնդիրքս ընդունէք և ստանաք նպաստները այդ ընտանիքի համար, այն ժամանակ խոնարհաբար կը խնդրէի ուղարկել ինձ փողերը, որպէս զի հասցնեմ իւր տեղը։ Այդ ընտանիքի անունը մասնաւորապէս գրում եմ Ձեզ, որ լմանաք։

Այրի Ջ. Ցէր-Բաբսեղեանց

Դեկտ. 19
Թիֆլիս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

— «Նոր-Դար»-ի 213 համարի մի փոքրիկ նամակում պ. Շերակեցին խօսելով իմ կազմած 1889 Թուականի «Օրացոյցի» մասին, մեղադրում է ինձ՝ «Նոր Տարի» վերնագրով մի՝ 12 տողից բաղկացած փոքրիկ ոտանաւորի ինչ տեղից արտատպած լինելը յոյց չտալուս համար։

Պէտք է ասեմ, որ ես ոչ Թէ մոռացմամբ եմ արել այդ, ինչպէս պարոնը քաղաքավարութեամբ նկատում է ինձ, այլ՝ գիտակցաբար։ Սակայն, կը խնդրէի այդ արարքս չարամտութեան չվերագրել, որովհետև ես ինձ պարտականութիւն եմ համարած մինչ յարգանքով վերաբերուել ուրիշի աշխատութեանը, խորշելով ընդ նմին ուրիշի սեպհականութեան սահմանը ոտք դնելուց։

Մտածելով, որ այդ ոտանաւորը ոչ Թէ մի ինքնուրոյն, այլ ժողովրդական գրուածք է, ես աւելորդ եմ համարել ժողովոյի ստորագրութիւնը ոտանաւորի հետ հանդէս բերել, մըտքովս անգամ անց չկացնելով, Թէ այդ վարմունքիս մի առանձին նշանակութիւն տուող կը լինի։ Ասածիս ապացոյց եմ բերում այն հանգամանքը, որ «Նոր-Դար»-ի պ. Շերակեցու յիշած յօդուածը իւր այդ փոքրիկ ոտանաւորով «Շերակեցի» ստորագրուելեամբ արդէն տպագրուած է իմ այս տարի լոյս ընծայած Դ. տարուայ «Հայոց լեզուի ուսուցիչ» դասագրքի 158-դ երեսում։

Ի դէպ. մինչև ամսիս վերջը լոյս կը տեսնի իմ «Ընտիր Հատուածների» ա. մասի երկրորդ տպագրութիւնը, որ յիշեալ Դ. տարուայ նորատիպ դասագրքիս հետ ներկայացնելու եմ «Նոր-Դար»-ի խմբագրութեանը։

Ց. Նազարեանց

20 դեկտեմ. 1888
Թիֆլիս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

— . . . Խմբագիր. Անցեալները բաղդունենալով պատահել եկատերինոդարի հայոց եկեղեցու երէցփոխան մեծ. պ. Միքայէլ Կարապետեանցին, խնդրեցի օգնել մի ուսանողի, որ նկարչական կարօտութիւն ունէր։ Յարգելի պարոնը միանուագ տուեց երեստասարդ ուսանողին մի հարիւր յիսուն րուբլի (150 ր.)։ Մի այսպիսի մարդասիրութիւնից դրդեալ՝ քաղցր և սեպուհ պարտականութիւն եմ համարում ինձ համար հրապարակաւ յայտնել մեծ. պ. Միքայէլ Կարապետեանցին իմ ի խորին սրտէ չնորհակալութիւնս և միանգամայն յարգանացս հաւաստիքը։

Վլադիկաւկազի Ծխական երկսեռ ուսումնարանների աւագ ուսուցիչ
Բաղդասար Միւիքեանց

1888 Թիւ. դեկտեմ. 14.
Վլադիկաւկազ

ՇԱՄՇԱԴՆԻ ՎԻՃԱԿԻ ՀԱՑԵՐԸ.

— Շամշադնի վիճակի բնակիչներն են՝ հայադաւան հայեր, շիա Թուրքեր և աղանդաւոր ռուսներ՝ մալականներ։ Բազմութեան կողմից՝ առաջին տեղը Թուրքերն են բռնում, երկրորդը՝ հայերը։ Այս երկրի ամենահին բնակիչները հայերն են, որոնց 12 դ դարու հնութիւններն արդէն աշխարհ հայտ տուած են. երկրորդ՝ Թուրքերը, որոնք իրրև Թէ Չինգիզ-խանի ժամանակն են այստեղ բնակուել։ Իսկ ռուսների այստեղ հաստատուելը արդէն 40 տարի է։ Բոլոր ժողովուրդն՝ առանց բացառութեան՝ խորին տգիտութեան, անշարժութեան և նահապետական սովորութիւնների մէջ է մնացել։ Սրանց համար ամեն բան մեռած է. հաղորդակցութիւն, առևտուր, ուսում, արհեստ և կեանքի ապահովութիւն ասած բանը ամենևին չկան։ Միայն գոված է այս երկրի իւղը իւր համեղութեամբ և օրակութեամբ։ Այս տեղի ժողովուրդը նահապետական ձևով ընդհանրապէս պարապում է՝ երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ էլ մեղուաբուծութեամբ, ջերմապահութեամբ և այգեգործութեամբ։ Թէյի գործածութիւնն այստեղ մօտ 25—30 տարի է, որ մուտք է գտել, իսկ գետնախնձորինը՝ մօտ 40 տարի է։ Սակայն չնայելով խեղճ ժողովրդի տաժանելի աշխատանքներին, այնքան էլ մեծ օգուտ չէ ստացուում, որքան սպասելի էր։ Համեմատելով շամշադնեցի հայերին իրենց գրացիների հետ, երևում է, որ հայերը շատ հարուստ, աշխատասէր, հիւրասէր, գործունեայ և գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերում շատ հմուտ ու գերազանցում են ամենին, ուստի և աւելի էլ օգուտ են ստանում, չնայելով, որ սրանք ևս միւսների նման միևնոյն եղանակով են մշակում երկիրը, բայց շատ օգտւում են շնորհիւ իրենց անխոնջ աշխատասիրութեան։

Շամշադնի վիճակը շատ հարուստ է հայոց հնութիւններով՝ վանքերով, բերդերով, աւերակ եկեղեցիներով ու տապանաքարերով, որոնք յայտնի կերպով ապացուցանում են այս երկրի փառաւոր և չքեղ անցեալը վաղ ժամանակներում։ Այստեղ կայ երեք վանք (Խորանաշատ, Վարագայ և Ղարա-Մուրադ), չորս բերդ (Աղջկայ բերդ, Կծաբաթի, Թովուզ-ղալա և Ղալա-Քոյին) և հինգ ուխտատեղի, որոնցից բաւականին արդիւնք է ըստացուում։ Այս վանքերի և բերդերի մասին ժողովրդի մէջ աւանդութիւնները են մնացել, որոնք անշուշտ հայոց պատմութեան համար էլ շատ Թէ քիչ նշանակութիւն կունենան։ Աւդէն աշխարհ երևում է, որ այս վիճակը մի ժամանակ շատ բազմամարդ հայ գաւառներից մէկն է եղել։ (գուցէ հենց սրա համար էլ ազատ չէ մնացել Թաթերալանի սէկհնեբից (ժանքներից), որի կեանքից տեղացիներն աւանդութեամբ պատմում են գանազան դէպքեր, նրա մանկութիւնը, գործերը, որովհետև մարդ այստեղ շրջելիս իւրաքանչիւր հարիւր քայլափոխում պատահում է աւերակ եկեղեցիների և գերեզմանատների, որոնք վաղուան (հին) գիւղատեղեր պէտք է եղած լինեն։ Բայց ափսոս, հազար ափսոս, որ այդ հնութիւններից շատերը այժմ էլ դանւում են Թուրքերի հանդերում, որոնք առանց խնայելու քանդում և աւերում են։

Հիմայ այս վիճակում կայ 17 հայ գիւղ. 16 գիւղը պետութեանը հարկատու, մէկը ազատ *)։ Այս հայ գիւղերում ապրում է մօտ 1000 տուն բնակիչ և ունին 14 ծխատէր քահանայ. բացի սրանցից՝ մէկ քահանայ էլ իւր յանդուգն և անվայել արարմունքների համար քահանայութեան պաշտօնից հրաժարեցրած է Հոգևոր Բարձրագոյն կառավարութեան կարգադրութեամբ։ Հայերը բոլորն էլ հայադաւաններ են. իսկ կաթոլիկ կամ բողոքական հայ ամենևին չկայ։ Այս երկրի բնակիչների մեծ մասը գաղթականներ են այլ և այլ տեղերից՝ զանազան ժամանակներում. բայց որքան ցաւալի է, երբ մօտ 1000 տուն բնակիչ ունեցող վիճակում՝ տարրական կամ ծխական դպրոց չկայ. ուրեմն մինչ դպրութեան մէջ կը լինի այսպէսի հայ ժողովրդի դպրութիւնը գրագիտութեան կողմից, այդ Թողնում եմ յարգելի ընթերցողներին որոշելու։ Ահա ինչ է ասում գիւղացին երբ ուսումնարանի անունը լսում է. «ա ձեզ մատաղ, սա ինչ բանդալաբ ա, որ իմ գլուխըս են պերում. տեղիցը վերկենողը իմ գլխին ա ուզում պալլաքութիւն սովորի. Թագա հաւերը են դուս եկել ըրկաՀայ ձուան են ածում. ասած ա՝ մուկը ծակը չէը մտնում ցլաւելն էլ քամակիցը կապեցին» և այլն. կամ Թէ չէ. «էհ՛, մէկի ինչ՞կամ կամ, տանէ չեմ հրսնեմ, խնձոր չեմ կարմրեմ, լաւ Թավատ քարին քացի տալով, իմ սև օրի հետ չուրսումիչ ըլելով, ոնց որ ա հօլա եմ գնում. մէկի նոր իմ տղէն գնալ բդի կարգայ, մարդ դառնայ, որ գայ ու իմ հրին հսնի, հասի մեղաւորին ձվ ա տուել արքայութիւն, ես էլ գովլաՀատէր գառնամ ու փայ ուտեմ, մինչի չերը կը Թրջուի, հիւանդի հոգին կը Թռչի, սոված փորներիս չկօլն ա պակաս, ես որ կրդացել չեմ ապրում չՀմ, խելքս ա պակաս Թա զվաՀս, հւատայ մի քանի կրդացողնի մի շայի տան ու երկու շայի ձեռքս առնեն, ես հաց չեմ Ճարում Թա ուտեմ, իմ վրի պարտքերը քիչ ա, նոր Թազայ պարտք ու խարչ ընկնեմ, որ իմ տղէքը կարդան, Ջաւէն կարդան ջհանդամին, ես չլելէն ետը ըսկի քարը քարի վրայ չկաղնի շատ դարդ կանեմ չէ. էլ իմ բուղաղովը հաց չի կուլ գնայ, գլերը էլ քունս չի տանիլ, որ շկօլ չլի։ Թեղճ խնգանս տկլոր հարամ հուրեան են, որ Թորոնըն ածեն, մնիցը շորահոտ չի վեր ըլիլ, պարտք ու խարջի ձեռիցը տանգըս կտրել ա, ջուլը փորս ա ընկել, ես էլ եօռլուղ եմ ըլիլ, ոնց որ ես ապրում եմ, իմ տղէն էլ իմ սէկս ապրի, հու նրա արինը իմինը կարմիր չի. ասած ա՝ հօր արածը որդուն փէշակ ա. նոր սհանք ուզում են էնը Թակելով ջորի չինեն, համա ես էդ բանին ըստպի չեմ, դարուլ չեմ. ես իմ տղին մնի նոքար ըդէմ տայ, գնայ իրա արևի ձէնը ածի, ընձ էլ մքիչ խէր կլի. ասած ա՝ մկան ...ը ջաղացին շահ ա. ես ձեզ խառնւում չեմ, ձեր մեղքը ձեր վիզը, գնացէք ձեզ հետ, ոնց որ ձեր խելքը կտրում ա, քենց արէք, համա ինձ խառնէք ոչ հա, էսա ասում եմ. լաւ ըմացէք. իմ տէրըն Աստօծլին, Թա իմ ճակատին փայ ա գրել Աստօծ, որ ես փայատէր դառնամ, ըսենց էլ կըտայ. Թա հու չէ, նոր իմ տղորանցը կարդացնելով չըտեմ փայ ուտէ»։

Շամշադնեցի հայերը կարճահասակ, նիհար, խնամրճ և աշխատասէր են. հագուստն ու ուտելիքները սովորական և հասարակ. սրանց լեզուն շատ պարզ, դիւրընթռնելի է. հարուստ է բառերով, ոճերով և դարձուածներով. սակայն տեղ տեղ բառերի մէջ ձայնաւորը տառը սեռական հոլովում դուրս են ձգում. օրինակ՝ ցորեն-ցորնի, կորեկ կորկի, արիւն արնի, ազբիւր աղբրի, ուռս ուսի և այլն։

Այստեղի հայ գիւղացիների մասին բաւական լաւ գաղափար է տալիս հետևեալ ասացուածքը.

Փորտղ Շամշադնեցի,
Կորկով հարստացած Նոր-շինացիք,
Ականջները կտրած վանքի տաւար
Կարմիր-Աղբրեցիք,
Մէջ տեղը կուչ են եկել, չորացած
Ջորաթնեցիք,
Իրենց Թշնամուն չեն Ճանաչում
կեղտոտ Մուսսեցիք,
Փրանց-փրանց զաչաղ Թանդրի վերդուզ պրծան չաբչի Ղըզեցիք,
Ոսի տակի կորած Ղուլալուեցիք,
Գաղաքավարի Թովուզեցիք,
Աբջի նման տանձ ու հաղարճ ուտող
Բերդցիք,
Շատ քաչ են կատաղի Թաթլուեցիք,
Իրենցից խաբար չունեն Մափալըեցիք,
Թուրքերի հետ միչտ կուռւմ են,
հաւի նման Թառ բլած Նաւուրեցիք,
Շատ են եկել չոփով հաւաքած
Հախումեցիք,
Ղոնաղից փախչող Վերին-Ջամբարակեցիք,
Փարդ ու դայիկ չունեն պարապ-սարապ Ներքին Ջամբարակեցիք,
Մի Ղրում գնացող, կռւից ու գըզից փախած Բաչքեանդեցիք,
Ինքնահաւան զանմազ Բադցիք,
Տէրտէրների աչքները լիս, խնամ չատ կոտորում են Կրզնեցիք,
Շամշադնի քահանաների դրութիւնը նիւթական կողմից՝ անտանելի և անհամանձելի է. սրանք իւրաքանչիւր մկրտութեան և պատարագի համար ստանում են քսան կոպէկ. փոքրի Թաղման համար 40—60 կոպէկ. մեծի Թաղման՝ 1—2 րուբլի, պսակադրամ՝ 2—4 րուբլի։ Կալօրհնէք ½—3 խան, տնօրհնէք 2—20 կոպէկ և մատաղի մօրթին։ Այսպէս հայերն այսօր մնացել են իրենց տատական-պապական սովորութիւններին, աւանդութիւններին և նախապաշարմունքների մէջ. սրանց մէջ վատ սովորութիւնները շատ կան, որոնց առաջն առնելու համար հարկաւոր է խնամ միջոցները գործ դնել։

Ց. Գասպար.

Ղուլալու.

ՄԻ ՆՈՐ ՈՒԽՏԱՏԵՂԻ

— Դեռ մինչև այժմ էլ մեր գաւառում գտնւում են այնպիսի գիւղեր, որոնց ժողովուրդը վերջին աստիճան նախապաշարուած է և հաւատ են ընծայում փալչների, բանթղների և սուտ ու մուտ երազողների։ Թէև շատ ու շատ վնասներ են կրում գիւղացիներն իրենց տգիտութիւնից, նախապաշարմունքից և անոտիապաշտութիւնից, սակայն դարձեալ չեն կարողանում հասկանալ և վերջացնել իրենց այդ վատ և վնասակար սովորութիւնները, որովհետև մի անգամ արդէն խմորուած են իրենց նախնիքներից և ուզում են հետևել նրանց անցեալ պակասութիւններին, որ արդէն երբէք ներելի չէ։

Անցեալներում մեր գաւառի Ագա գիւղում մի պառաւ գիշերը երբ երազում տեսնում է, Թէ եղեռազարեան ցաւութիւնի պարտիզում՝ (որ գտնւում է լերան ստորոտում) ընկուզենու տակ՝ մի սուրբ կայ և անունը կոյս Հռիփսիմէ է։ Առաւօտեան այդ պառաւը, քնից արթնանալով, դուրս է գալիս փողոց, ուր որ տեսնում է, սկսում է պատմել իւր սքանչելի երազը, որով կարողանում է հաւատացնել խեղճերին, և հաւաքում ու տանում է իւր երազում տեսած պարտէզը, ուր ցոյց է տալիս մի ծառը, որի տակ տեսել է կոյս Հռիփսիմէին։ Բաւական է, որ մարդիկ իմացան սուրբի տեղը. սկսում են եռանդով քանդքանդել ծառի չորս կողմը մինչև, որ ահագին ընկուզենին փռւում է գետին, բայց կոյս Հռիփսիմէն տակից չէ դուրս գալիս, որ Համբուրեն և իրենց մուրացին հասնեն։

Երկրորդ գիշերը կոյս Հռիփսիմէն մի ուրիշ պառաւի և գիւղի գլուխն է երազներում յայտնւում։ Բայց այս անգամ սուրբը սկսում է սպառնալիքով խօսել նրանց հետ և պատուիրել, որ գնան շուտով յայտնեն ժողովրդին, որ գան իրեն հանեն, տէրտէրներով, տիրացուներով, խաչով ու խաչվառով տանեն դնեն եկեղեցում, եթէ ոչ՝ բոլոր գիւղը կը ջնջէ ու մի մարդ կամ անասուն չի Թողնել կենդանի։ Եթէ պատիժի տէրը ընդիմանայ ու չհաւատայ, որ պատիժը քանդեն ու սուրբին հանեն տանեն, սուրբը ամենից առաջ նրա դիւանը կանչէ։ Հենց պառաւն ու գիւղը այդպիսի երազ էին ցանկանում տեսնել։ Ուրեմն և պէտք է ասենք Թէ՝ երկնքից լոյս իջաւ, տեսողն եղաւ

*) Այդ ազատ գիւղը Զորաթեանն է, որ պատկանում է Մելիք Քալանթարեաններին, ուր իրենք են բնակւում։

գգիրը (պառաւն էլ աւելի)։ Առաւօտեան վեր են կենում պառաւ ու գգիր, ում որ պատահում են, սկսում են, առաջին անգամ երազ տեսնող պառաւի պէս, պատմել նրանց այդ չտեսած երազը։ Լսողները սարսափում են, մտածելով թէ՝ մի գուցէ սուրբը նրա ասածն անէ։ Նրանք հաւաքւում են տէրտէրով ու իշխանով, գնում կրկին սուրբին գտնելու. սկսում են քարուքանդ անել ողորմելի գիւղացու պարտէզը (պարտիզի անմիտ տէրն էլ բան չէ ասում, քանի որ լսել է սուրբի սպառնալիքը), բայց դարձեալ կոյս Հռիփսիմէն չէ դուրս գալիս հողի տակից։ Այդ բանի վրայ գիւղացիները շատ են տխրում ու չուարած ետ դառնում։

Այդքանով ևս բանը չէ վերջանում, այլ մի քանի օրից յետոյ մի Տերշմարդ՝ մօտ 65 տարեկան, մի լուսնեակ գիշեր, անցնելով սրբի յայտնուած պարտիզի մօտով, տեսնում է, որ երկնքից լոյս է կամար տուել երկնից քանդած տեղի վրայ։ Այդ Թշուառ Տերունին այնչափ հաւատացած է պառաւների և գգրի երազին, որ կարծում է անպատճառ սուրբ կայ պարտիզում, էլ չէ կարողացել դիտել ու հասկանալ, որ լուսինն է ծառերի մէջից լուսաւորել երկնից քանդած տեղը և ոչ թէ սրբի խաթրի համար երկնքից լոյս է իջել։ Տերունին ևս գնում է սրան նրան պատմում իւր տեսած լուսի մասին, որով ևս առաւել հաստատւում է գիւղացիների հաւատը պարտիզում սուրբ լինելու մասին։ Այդ իսկ պատճառով հաւաքւում են գնում սուրբ յայտնուած տեղի վրայ՝ մօտ 1 սաժէն տարածութեամբ տեղ՝ ցեխից չորս կողմը՝ կլոր ձևով՝ պատ են գնում ու վրան էլ խոտերով ծածկում, այնպէս որ մարդ պէտք է կռանալով մտնի այդ չինած սրբատեղին և ուխտ անէ։

Գ.

Ագուլիս.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԵՐԱԽՍ (Անդրկասպեան երկիր), 5 դեկտեմբերի։—Անդրկասպեան երկրի վաճառականներն և զանազան վաշտի ու գնդի կապալառուներն եթէ ոչ բոլորը, գոնէ մեծամասնութիւնը զարթարեղջ է։ Անցեալ 1880 Թուից սկսած մինչև այժմ, ունենալով առևտուր ռուսաց զօրքի և տեղացին բնակիչների հետ, շատերին աջողուել է մի փոքր գումար վաստակել։ Մինչև այժմ տարից տարի աջողուել է այդ հայերին այնքան փող աշխատել, որ բացի տարուայ ընթացքում արած չռայլ ծախքերից, մնացել է և մի փոքր գումար։ Սակայն այժմս բոլորովին հակառակերն է կատարւում,—որովհետև առևտուրը չկայ, եղածն էլ վնասով է լինում։ Դրա պատճառը գլխաւորապէս կայանում է նրանում, որ տեղիս վաճառականներն և կապալառուները, շատ քիչ բացառութեամբ, յաղկացած են երկնից գործին անբնդունակ և նոյն իսկ գործին անծանօթ մարդկանցից, որոնք ամեն մի գործ միմեանց նայելով են սկսում և առևտուրի միջոցին չեն օգուտը վերացել է։ Բաղդի բերմամբ մի քանի բուրլի ունեցողները մտնելով երկնից անծանօթ և խելքից հեռու առևտրի մէջ, Թեթևանում են փողից և կամաց կամաց հրաժեշտ են տալիս երկնից մի քանի տարուայ ընթացքում վաստակած կարողութիւնից։

Ասածները կարօտ չեն մի որ և իցէ ապացոյցի, որովհետև Անդրկասպեան երկրում, ամեն մի շատ թէ քիչ հասկացողութիւն ունեցող վաճառականը պէտք է խոստովանուի, որ այժմ Անդրկասպեան երկրում օգուտը վերացել է նոյն իսկ «վաճառականների» և «կապալառուի» տիտղոս կրողների միմեանց ոտի տակ քանդելու պատճառով։

Տէրը մի արասցէ, եթէ այսպէս շարունակ խարդախութիւնները երկար տևեն, շատ չի անցնիլ—մէկ էլ կը տեսնենք, որ 1880 Թուականի գործակատարը, որ բաղդի բերմամբ վաճառական էր դարձել, էլի գործակատարի պաշտօն կ'որոնէ, դերձակը կըերկին քեարկահութեան պաշտօն է որոնում և այլն և այլն։ Եթէ մի որևիցէ երեն անծանօթ առևտրի մէջ ևս ըլուսաղ, վաճառականի տիտղոս կրողից հարցնում ես, թէ «ախը ինչու ես մտնում այս ինչ գործի մէջ, քանի որ դու բոլորովին անծանօթ ես այդ ինչ գործին», նա հպարտօրէն կամ մի դժգոհ հայեացք է ձգում վրադ կամ ասում է. «ես տնից եկել եմ ձեռնունայն. ինչ եմ բերել տնից՝ որ ամաչեմ ծնողից, մտնում եմ այս գործի մէջ՝ իսկ ետը տուողն Աստուած է». և իրաւ, նրանք միայն ապաւինելով Աստուծոյ ողորմութեանը, մտնում են երկնից անծանօթ գործի մէջ, յետոյ մնում են ողորմելի... և առ այժմս համարձակ կարելի է գուշակել մեր Թափառականներիս տխուր ապագան, եթէ այդպէս շարունակուի...

Մեր վաճառականներից մի քանիսըն էլ ուրիշ տեսակ մէջոցով են վերնասւում։ Եղած են այնպիսի երիտասարդներ, որոնք ժամանակաւորապէս վերադառնալով հայրենիք, երկնից ներկայացրել են շատ հարուստ և միանգամից «կրակի տէրերից մէկը» և նոյն իսկ փարթամութեամբ պահուել են—նոյն փարթամութեան համապատասխանող ընտանիքի զաւակների հետ։ Նրանք երկնից կեանքի համապատասխան կենցաղավարութիւնը կարողացել են շրջունակել մէկ-երկու ամիս, իսկ յետոյ մի որ և իցէ գործ պատճառաբանելով, օրինակ պատճառաբանելով, թէ տեղս երկնից գործակատարները, իւր բացակայութեան պատճառով, կարգին չեն կառավարում իւր գործերը, ուստի իւր ներկայութիւնը անհրաժեշտ է, իւր երկու ամսեայ հիւրատասրդ հինոջը Թողնում գալիս է կրկին տեղս, մի որ և իցէ գործ սկսում։ Հիմայ հարց է, արդեօք երկու ամսուայ մէջոցում կարողանում է մարդ իւր նորապսակ հնոջը Ճանաչել, ծանօթանալ նրան ամեն մի կողմով, կամ երիտասարդ կինը հասկանալ և ըմբռնել նրա ուղղութիւնը և սիրել նրան...։

Աւելի ցաւալին այն է, որ երկու ամսեայ հնոջը Թողնելով տանը, գալիս են օտարութիւն և, դժբաղդաբար, չկարողանալով այնքան գումար վաստակել, որ կարողանան նոյն առաջուան փարթամութեամբ գնալ տուն երկնից հնոջ տեսութեանը, որ երազի պէս է յիշում իւր ամուսնուն, մնում են ընդ միշտ Թափառելիս Թորգոմեան աւազոտ երկրէը՝ երկնից անաջողութիւնը լիովին վերագրելով Ճակատագրին, բայց—Ճշմարիտը խոստովանուած, երկինք են անաջողութեան սկզբնապատճառը։ Եղած են այսպիսի շատ օրինակներ։

Ինչպէս լսում ենք, Ասխաբադում հայ վաճառականները բացել են ժողովարան (կլուբ), սակայն աւելորդ չեմ համարում ասել, որ ժողովարանը ինքն ըստ ինքեան կարող է նպաստամատոյց լինել լուսաւոր դասակարգին, և դժբաղդաբար մեր «ժողովածու» վաճառականների մէջ շատ սակաւ են կլուբի նշանակութիւնը հասկացողները և կարելի է ասել, որ կլուբի նշանակութիւնը մինչև անգամ դժուարութեամբ սիրի լսանան կլուբի անդամները մեծամասնութիւնը, բայց օրովհետև, ինչպէս ասում են, արդէն վճռուած է կլուբ ունենալը և անդամները ստորագրութիւնն արդէն կատարուած վերջացած է, ուստի խորհուրդ կը տայինք և աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ Ղարաբաղից բերել տային մի քանի սազանդարներ, որպէս զի «վալսի և «կադրիլ»ի փոխարէն պարէին «հալլէ», «քեչէ մամասի» եղանակները, որովհետև կլուբի անդամների մեծամասնութեան աւելի ծանօթ է և կը սիրեն «հալլէ»-քան թէ «վալս». աւելի լաւ չէը լինիլ, եթէ մի որ և իցէ բարեգործական գործի համար փող ժողովէին, քան երկնից շատերին անծանօթ և անօգուտ գործին։

* * *

ՋԱԼԱԼ-ՕՂԼԻ, 15 դեկտեմբերի.—Աստեղ մի տեսակ ախտ է դարձել, մի տեսակ փող վաստակելու և գոյութիւնը պահպանելու համար մէջոց է դարձել բաց անել մանաւոր ուսումնարանները, որոնք ոչ ուղղութիւն ունին, ոչ նպատակ։ Այդ մարդիկ չեն մտածում, որ այդպէս չէ կարելի վարուել նոր սերնդի կրթութեան հետ։ Վերջապէս ծնողները՝ առանց հասկանալու Ճշմարիտ ուսման և հիմնաւոր ու օգտակար կրթութեան կարեւորութիւնը, դեռ մինչև այժմ չեն հասկացել, որ աւելի լաւ է երկնից որդիներին բոլորովին ուսումն չտալ, քան թէ նրանց տրուի վնասակար, բթացնող, մեքենայ դարձնող և խաւիճֆայական կրթութիւն... Դեռ նրանք —ցաւելով պէտք է ասել—ուղարկում են երկնից որդիներին այդ սպանդանոցները. ինչ է, որովհետև այնտեղ աժան են կարդացնում... Օրինակ՝ մէկ պարոն, որ բաւական չէ, որ կարդալ չգիտէ, ոչինչ էլ չգիտէ, այլ մինչև անգամ ողորմելու ականջները խուլ են, մանաւոր դասեր է տուել անցեալ տարի և այս տարի էլ կամենում է նոյն բանը սկսել... Ժողովուրդը նրան հաւանում է, այն էլ երեք զօրաւոր պատճառներով...—Նախ որ նա աժան է կարդացնում. երկրորդ՝ որ նա առաւօտուանից երեկոները—այդ ազատ ամող արարածներին—փակում է իւր օդայում՝ դասատնում մինչև երեկոյ, և երրորդ՝ ժամագիրք և սաղմոս է դաս տալիս, ինչպէս ասում են «ծրտի-պրտի» բաներ չէ սովորեցնում...

—«Աման Թէ վարժապետ ա հա մեր խալֆէն. էլ դնջութիւն չկայ տնաշէնին. առաւօտուանից չբվանց երեկոն ըրեխանցը ըշկոլից բաց չի Թողնում։ Երկու օր չկայ՝ մեր ըրեխէն գնացել ա չկօլ, էն ա հա՝ այլ ու բէնը վերջացնում ա...» խեղճերը չեն մտածում, որ այդ ողորմելիները միայն «չուրն ածելու են», ուր մնաց նրանց յանձնելու երկնից որդոց կրթութեան գործը—այդպիսի մի սրբազան և, ինչպէս ասում են, փափուկ, նուրբ պատճառներով...—Նախ քան քանի խելօք գլուխներ այդ մասին մտածել են և որքան գգուշութեամբ կանոնները հնարել, մեթոդները կապմակերպել՝ ամեն ինչ չարմարեցնելու բնութեանը և մարդկային բնաւորութեանը... Ախ ծնողներն այս անգամ չեն մտածում, որ հենց վատ «փեշեքաբէ»՝ արհեստաւորի չինած բանը ոչնչի պէտք չէ գալիս, չնայած, որ նրանք չինում են անշուշտ, դատարկ բաներ... Չէ որ վատ «վրժապետի» տուած կրթութիւնը անչափ վնասակար է, բանի պէտք չէ։ Չէ որ նա փչացնում է նոր սերնդի կրթութեան գործը, աւելի ճիշդն ասած՝ բթացնում նրանց, և այդ ինչքան անբարեղջութիւն է։ Այդ հանգամանքում աւելի լաւ չէ երկնից որդիները ուսումն չը տալ, որ գոնէ չբթանային, իդիօտ չդառնային, կեանքի համար անպէտք մարդիկ չդուրս գային։

Մի օրինակ էլ։ Մի կին, որ ոտք ու ձեռք չունի, խեղճ է՝ նոյնպէս պարապում է մատաղ սերնդի կրթութեամբ, ես լաւ ճանաչում եմ այդ կնոջը,—քանի տարից ի վեր երեխայ է կարգացնում, որպէս զի այդ միջոցով ապրի... Ժողովուրդը իւր որդոց նրան տալով՝ կարծում է, Թէ նրան մեծ բարութիւն է անում. բայց մէրթէ ժողովուրդը ուրիշ կերպ չէ կարող նրան օգնել... Մէրթէ այս էլ չեն մտածում, Թէ ինչ օգուտ է տուել նա այսքան ժամանակ։ Վերջապէս նա՝ այդ կինը, մէրթէ չէ մտածում, որ ինչ որ իւր գործը չէ, չպէտք է անել։ Մէրթէ նա չէ մտածում, որ կրթութեան գործի հետ այնքան անզգուշութեամբ և անհեռատեսութեամբ խաղալ չի կարելի՝ նրան մի-միայն ապրուստի միջոց դարձնելով և միմիայն ապրուստի միջոց...

Մի երրորդ օրինակ էլ։ Մի վրժապետ, որ վերջերումս մի մանաւոր ուսումնարան ունէր, այժմս էլ կամենում է նոյնն ունենալ. այնպէս էլ՝... պէտք է ապրի... Բայց մէրթէ ուրիշ ապրուստի միջոց չկայ և կամ չի կարող գտնել... ինչու այդ պարոնը չէ հասկանում, որ իւր ժամանակն անցել է, «Թաւն» էլ անցել է, որ նա պիտի տեղը տայ աւելի օգտակարին։ Բայց ինչ անես, որ նա յօգուտ երեն դեռ «պրօպագանդա» էլ է անում։ Ի հարկէ, պարզ բան է, Թէ ինչի մէջ կը կայանայ այդպիսիների «պրօպագանդան»։

Այս և սրա նման երևոյթները մեզ մօտ վնաս են հասցրել և կը հասցնեն Ջալալ-Օղլու երկսեռ դպրոցներին, որոնք հազիւ հազ կանոնաւորւում են. ունենք այս տարի կանոնաւոր և որոշ ծրագրով առաջնորդուող ուսումնարան, ունենք մի համեստ և եռանդուն ուսուցչական խումբ։ Մտածեցինք, որ ուսման գործը Ջալալ-Օղլում կանոնաւոր դրութեան մէջ կը դրուի. յոյս կար... և յոյս էլ կայ, որ յաղթանակը նա էլ կը տանէ. նա օգտակար է, հիմնաւոր և արդիւնաշատ։ Ինչ է մտածում այդ մասին ժողովուրդը։ Եւ ինչ կարող է մտածել նա.—նա շատ քիչ հասկացողութիւն ունի Ճշմարիտ ուսման վերաբերեալ, նա շատ անգամ սխալուել է կամ, ուղիղն ասած, սխալեցրել են նրան իւր հնթադրութիւնների, եզրակացութիւնների մէջ. նա չի կարող օգտակարի և վնասակարի սահմանները որոշել։—Ո՞ւմ պարտքն է նրանց հասկացնելը։ Ո՞վ պէտք է այս հանգամանքում եղած չարիքների առաջքն առնէ։—Ի հարկէ նրանք, որոնք հասկանում են, որոնք առաջաւոր դեր են խաղում ժողովրդի մէջ և որոնց պարտքը պիտի լինի նախանձախնդիր և պաշտպան հանդիսանալ Ճշմարիտ կրթութեան գործին։ Այս կողմից պարտականութիւն է ընկնում և մեր երկսեռ դպրոցների հոգաբարձուների վրայ, մեր Ջալալ-Օղլու մասին մտածող անձերի վրայ և, չպէտք մոռանալ, մեր երկսեռ դպրոցների ուսուցիչների վրայ, որոնք պարտական են մտնել ժողովրդի մէջ, հասկացնել նրան Ճշմարիտ ուսման կարևորութիւնը։

Ջալալ-Օղլեցի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ.—Ելոպական մամուլը տեղերի առթիւ նուիրում է գանազան յօդուածներ քաղաքական դրութեան մասին։ Վենայի լրագիրները շատ վատ են տեսնում երեքի դրութիւնը, բայց և այնպէս յոյս են յայտնում, որ խաղաղութիւնն առաջիկայ 1889 Թուին կը պահպանուի։ «Neue-Freie-Presse»-ը մատնացոյց անելով այն հանգամանքի վրայ, որ գինուած խաղաղութիւնն ներկայումս աւելի Թանկ է նստում եւրոպական պետութիւններին քան Թէ պատերազմը, ուելացնում է. «Գերմանիան մեծ ծառայութիւն մատուցած կը լինէը մարդկութեան, եթէ ընդհանուր գինաթափութեան գործի նախաձեռնութիւնը յանձն առնէր»։ Գերմանական կիսապաշտօնական «Post» Թերթը հրատարակել է մի յօդուած «Քաղաքականութեան ծննդեան տնը» վերնագրով, որի մէջ յայտնում է, որ 1886 Թուից սկսած պատերազմի երկիւղը չէ վերջանում։ Մանաւանդ այդ երկիւղն աւելի էր այս տարի, երբ Աւստրիայի արևելեան սահմաններում երկու մեծ պետութիւններ կիզբոնացնում էին երենց զօրքերը։ Պատերազմի երկիւղը քանի գնում աւելանում էր, բայց վերջին ժամանակներս, իբ. Բիսմարկի շնորհիւ, այդ երկիւղը մի փոքր նուազեց։

ԲՕԼՂԱՐԻԱ.—Անցեալները վախճանեցաւ Հեսսէնեան պրինց Ալէքսանդրը, այսինքն Ալէքսանդր Բատտէմբերգի—բօլղարական նախկին իշխանի հայրը։ Բօլղարական ազգային ժողովը լսելով այդ լուրը, անմիջապէս մի հեռագիր է ուղարկում պրինց Ալէքսանդրը Բատտէմբերգին ցաւակցութիւն յայտնելով։ Ցաւակցական հեռագիր է ուղարկում նաև Բօլղարիայի ներկայ իշխանը՝ պրինց Ֆերդինանդ Կօբուրգը։ Իսկ բօլղարական հետևակ գունդը, որի չէֆն է Ալէքսանդր Բատտէմբերգը, կապիտան Ստօյանովին ուղարկեց իւր կողմից պատգամաւոր։

—Վեննայից ռուսաց ԹերԹերին հեռագրում են, որ Սօֆիայում պրինց Կօբուրգի կազմած պարահանդէսին պետութիւնների հիւպատոսները չեն գնացել։ Պարահանդէսի միջոցին պրինց Կօբուրգը երբե Թէ անուշագիր է վերաբերուելիս եղել գէպի Ստամբուլովը և ընդհակառակն, ուշադրութիւն է դարձրել Բաթօսլաւովի վերայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Խրլստանիայում վերջերս կայացած «գիտնական ժողովում» ոմն Հէց ազգանունով, ցոյց տուեց մամոնտի մի ատամ, որ գտել է Շէրվայլ մօտ, վօհէում, այնպիսի հանգամանքներում, որոնք պարզ ապացուցանում են, Թէ մամոնտն ապրելիս է եղել այդտեղ։

* * *

Ամերիկան բարքեր.—Վերմօնտում (Հիւսիսային Միացեալ-Նահանգներում) մի ագարակատէր տեղական ԹերԹերի մէնի մէջ հետևեալ յայտարարութիւնն է հրատարակել իւր կինն ծանօթելու մասին. «Հասակը—5 ֆուտ և 5 դիւյմ է, տարիքը—32, բաւական զարգացած կերպարանքով, մազերը—սև, աչքերը—մոխրագոյն, մեծ. ձեռներն ու ոտները—ոչ այնքան մեծ, բնաւորութիւնը—դիւրագգաց։ Ճանկացողները կարող են (ուրիշ օրերին և ժամերին) տեսնել նրան»։

* * *

Հետաքրքիր դէպք.—Անցեալ-ները Թիֆլիսում մի չատ հետաքրքիր դէպք է պատահել։ Տէր-Աստուածածնցի լուցկու գործարանում, որտեղից մի քանի ամիս առաջ, բանուորներից մէնի հետ դժբազդութիւն էր պատահել.—խեղճը այրել էր մատները և մինչեւոյն ժամանակ այնպէս վատ, որ ստիպուած եղան կտրելու նրա աջ ձեռքի դաստակը։ Ձեռքի անդամահատութիւնը կատարուեց գործարանում, գործարանի կառավարչի յղի կնոջ ներկայութեամբ։ Անցաւ մի քանի ամիս և այդ մասին քոլորն էլ մոռացան։ Որքան մեծ եղաւ այդ դէպքին մասնակցողների զարմանքը, երբ մօտերքս գործարանի կառավարչի կինը երեխայ է բերում և երեխայի աջ ձեռքի դաստակը պակաս է լինում. դաստակը կարծես կարուած է եղել և մինչեւոյն ժամանակ ուղիղ այնպէս, ինչպէս որ կարուած էր անբաղդ բանուորի դաստակը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի
ՀԻՄՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 դեկտեմբերի.—«Journal de St. Peterbourg»-ը հաղորդում է, որ յայտնի ֆրանսիական Ասիայում ճանապարհորդող Մարտէն, որ ներկայումս Պետերբուրգումն է գտնւում, ձեռնարկել է ուշադրութիւն անելու Մրջին Չինաստանում և Արեւելեան Տիբէտ, յետոյ, հանգուցեալ Պրժեվալսկու նախագծով, Մօնղոլիայի և Սիբիրի վրայից կը վերադառնայ Ռուսիա։ Թագաւոր Կայսրը ընդունեց Մարտէնին, որ վայելում է կայսերական և աշխարհագրական ընկերութեան և գրախառոր շտաբի սպաների հովանաւորութիւնը և կարող է յոյս ունենալ, որ գրամական օժանդակութիւն կ'ստանայ այդ ճանապարհորդութիւնից, հետաքրքրող անձերից։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ հրամանագրուած է փոխադրիչ գնդերի կազմակերպութեան մասին՝ ամեն մինը 4 վաշտից կազմուած. բոլորը պէտք է լինի հինգ բատալիոն 18 վաշտից, որոնք պատերազմի միջոցին պէտք է 18 բատալիոնի բաժանուին։

ՁՈՐՋՈՅ, 19*) դեկտեմբերի.—Ազգանական էմիրը բազմաթիւ հետևորդներով ուղևորեցաւ Իսահակ խանի ապստամբութեան մասնակցած վայրերը՝ յանցաւորներին ինչպէս հարկն է պատժելու համար։

ՁՈՐՋՈՅ, 21 դեկտեմբերի.—Իսահակ խանը փոքրաթիւ հետևորդներով, ռուսական վարչութեան թոյլտուութեամբ, Սմրզանդ եկաւ մշտապէս ապրելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Փոխ-ծովակալ Պոպովին, նրա ծառայութեան յիսունամեակի առթիւ, Բարձրագոյն հրովարտակով շնորհուած է շղթակերով զարդարուն մի ծխախոտի տուփ՝ վրան Թագաւոր Կայսրի պատկերով։ Փոխ-ծովակալ Ասլանբէկովին, նոյնպիսի ծառայութեան առթիւ, շնորհուած է Սպիտակ Արծուի շքանշան։

ՀՌՈՄ.— Թագաւորը նոր տարու

*) Թիֆլիսում ստացուած է դեկտեմբերի 21-ին։

ընդունելութեան միջոցին ասաց, որ պետութիւնների բարեացակամ մտադրութեան շնորհիւ կարելի է 1889 թուին էլ խաղաղութեան պահպանութեան մասին յոյս ունենալ։

ԲԵԼԳՐԱԴ.— Սկուպշտինայի մասնաժողովը Ձայների ահագին մեծամասնութեամբ ընդունեց սահմանադրութիւնը, որով հնարաւոր է դառնում և այն, որ սկուպշտինան կրկնդունի նրան։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

20 Դեկտեմբերի։

Լօնդօն 96,60 ր. 95,90 ր., 96,50 ր.
Համբուրգ 47,25 ր.
Պարիզ 38 ր., 37,90 ր.
Պօլուխմպերեալ 7 ր. 71 կ. սակ.
Մաքս. կուպօն 154 ր. 50 կ. սակ.
Ազծաթ . . . 1 ր. 16 կ. սակ.
Բօրսային պես. — և —
Պետակ. բանկէ 5% տոմս.
1-ին շրջանի. . 99 ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 98 ր. — կ. սակ.
3-րդ . . . . . 97 ր. 62 կ. գն.
4-րդ . . . . . 97 ր. 62 կ. գն.
5-րդ . . . . . 97 ր. 62 կ. գն.
4% ոսկէ նոր փոխառութիւնը . . . 141 ր. 50 կ. սակ.
100 և 1000 ր. արևելեան փոխառութեան 5% տոմսեր,
1-ին շրջանի . 98 ր. 12 կ. սակ.
2-րդ . . . . . 97 ր. 15 կ. գն.
3-րդ . . . . . 97 ր. 37 կ. սակ.
Առաջին 5% ներքին փոխառութեան տոմսեր . . . 272 ր. 25 կ. սակ.
2-րդ . . . . . 245 ր. — կ. սակ.
5½% բէնտեր . 103 ր. 25 կ. սակ.
Ոսկէ բէնտ . . 174 ր. 75 կ. սակ.
Թիֆ. քաղ. վարկի ընկեր. օբլից. . . — ր. — կ. գն.
Պետական բանկի 4% տոմսեր . . 98 ր. — կ. գն.
Երկաթուղու բէնտ — ր. — կ. սակ.
Ազնուակ. հող. բանկի գրաւաթղթերը — ր. — կ. գն.

Պետերբուրգի բորսային տրամադրութիւնը հաստատուն է։

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

РОДИЛЬНЫЙ ПРІЮТЪ
акушерки
С. З. ИЗАНОВОЙ
Сололаки, Садовая ул., д. № 42.

ԹՆՆԴԱՐԱՆ
ՄԱՆԿԱԲԱՐՁ
ՍՕՖԻԱ ԽԻԶԱՆԵԱՆԻ
Սէյրան, Սաֆօվայա վոլոց, տ. № 42.

Թէ ցերեկուայ և թէ գիշերուայ տմենայն ժամանակ՝ ընդունւում են լրագիրներ, երկունքով բռնուածներ (ցաւողներ) և ծննդականներ, որոնք խրնամւում են չարունակ մանկարարձի հսկողութեան տակ. տրւում է նրանց նաև սպիտակեղէն և կերակուր։

Ծննդի և ծննդեն հետևող շրջանի խնամատարութեան համար վճարում են՝ 50 րուբլի (առանձին սենեակում) և 10-կոպ մինչև 30 րուբլի (ընդհանուր սենեակներում)։

Օրական 1-ից մինչև 3 րուբլի
X—42

№ 75

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ Է

Մատուռը, բարոյական ախտի և անբարոյականութեան դէմերի համար

ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

Հեղ. գոկտօր ՐՆՏՈՒՒԻ

Ուռուերէն հրաշալիօրէն երէք գծագիրներով է ։ գինն 1 ր.։

Թող այս գիրքը կարդայ ամեն ոք, որ վերոյիշեալ ախտն ունի. նա շատերին փրկել է յայտնի կորուստից։

1 ր. պոստալոն պէս գրչի հրաշալոր Ր. Ֆ. Բիրեյի մագազինը Լայպցիգում՝ ուղարկում է գիրքը։ (Հասցէն. R. F. Bierey's Verlags-Magasin in Leipzig).

(М) 50—49

ԱՆԴՐԿՈՎ ԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաքուում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մար. գն. 3 ժ. 21 վ. ց.
Ազստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.

Գալիս է

Բաքուից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, ,, 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Ազստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

ԳՕԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԷԿՏԻ ՎՐԱՅ

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ
ՆՈՐ ԲԱՑ ՈՐԱԾ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Մէրձմանեանի տանը, նահանգական պապարանի դէմ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ստացուած է արտասահմանեան և ռուսական նոր՝ տղամարդկերանց և տղաների հագուստ։

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՈՒԱՑ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Գօլովինսկի պրօսպեկտի վրայ, Մէրզոյեանի տանը (նախկին Բելլէի)

ՄԱԳԱԶԻՆԸ ՓԱԿՈՒԵԼՈՒ ԱՌԹԻՒ

Վերջնական Էժան վաճառքն է նշանակած

ՄԵԾ ՁԻՋՈՒՄՈՎ

Մինչև դեկտեմբերի 24-ը, այնտեղ մնացած ապրանքի։

19—15

Լոյս տեսաւ և վաճառւում է Թիֆլիսի յայտնի գրավաճառանոցներում

„ԱՇԸՂ ՂԱՐԻԲԻ ՀԷՔԻԱԹԸ“

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոր երգերի յաւելուածով, աշխատ. ԱՇԸՂ-ՋԻԱՆԻՆ։

Գինն է 45 կոպ., գումարով գնողներին զիջումն կը լինի։

3—2

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառւում են Թրխմեան Հայրիկի հետևեալ գրքերը.

1) Դրախտի ընտանիք, . . . գինը 1 ր. ճ. ծախքը 25 կ.
2) Սիրաք և Սամուէլ, . . . — 1 ր. » » 25 »
3) Մարգարիտ արքայութեան, — 50 կ. » » 15 »
4) Յիսուսի վերջին շաբաթը, — 50 կ. » » 15 »

(ա.) 6—5

„НОВОСТИ ДНЯ“

ЕЖЕДНЕВНАЯ ОБЩЕСТВЕННАЯ, ПОЛИТИЧЕСКАЯ и ЛИТЕРАТУРНАЯ ГАЗЕТА.

ИЗДАНІЯ ГОДЪ СЕДЬМОЙ.

1889 ВЪ ГОДУ

ИЗДАНІЯ ГОДЪ СЕДЬМОЙ.

Цѣль газеты „Новости Дня“—въ общедоступной формѣ служить для читателя живымъ и яркимъ отраженіемъ интересовъ текущей дѣйствительности. „Новости Дня“ удовлетворяютъ, какъ столичныхъ читателей, быстро схватывая на лету злобу столичнаго дня, такъ и провинціальныхъ, давая въ отдѣлѣ беллетристики легкое и занимательное чтеніе въ формѣ романовъ, повѣстей, очерковъ и разсказовъ, помѣщаемыхъ въ ежедневномъ фельетонѣ,

„НОВОСТИ ДНЯ“, какъ и въ прежніе годы, дадутъ своимъ читателямъ возможно ЯСНОЕ И ТОЧНОЕ ПРЕДСТАВЛЕНІЕ обо всѣхъ выдающихся явленіяхъ политической и общественной жизни.

МОСКОВСКІЯ НОВОСТИ—полный отчетъ о событіяхъ и происшествіяхъ прошедшаго дня; свѣдѣнія о предстоящемъ; отчеты и засѣданіяхъ сословныхъ, ученыхъ и благотворительныхъ учрежденій; распоряженія правительства и администраціи и т. д. МИМОХОДОМЪ—біографическія свѣдѣнія о знаменитыхъ ученыхъ, этнографическіе очерки, важнѣйшія открытія и изобрѣтенія, злобы иностранной жизни. СПОРТЪ—всевозможныя свѣдѣнія по всѣмъ отраслямъ спорта. ТЕАТРЪ и МУЗЫКА—рецензіи, краткія замѣтки, сообщенія и слухи изъ области театра и музыки. ПЕТЕРБУРГСКІЯ НОВОСТИ—постоянныя извѣстія изъ жизни приневской столицы. ПРОВИНЦІЯ—жизнь городовъ и деревень. ВЪ ЦАРСТВѢ ѲЕМИДЫ—судебная хроника: отчеты о выдающихся процессахъ въ общихъ судебныхъ мѣстахъ; отчеты о наиболѣе характерныхъ по бытовымъ подробностямъ процессахъ у мировыхъ судей, въ коммерческомъ судѣ и проч. РАЗНІЯ ИЗВѢСТІЯ—масса мелочей. СМѢХЪ и ГОРЕ—стихотворенія, анекдоты, эпиграммы, каламбуры, шутки, курьезы. СПРАВОЧНЫЙ ОТДѢЛЪ—биржевые бюллетени, судебный указатель, календарь, списокъ недоставленныхъ телеграммъ, зрѣлища и увеселенія и т. д.

Кромѣ всего этого въ „Новостяхъ Дня“ помѣщаются научно-популярные фельетоны, рефераты читанные въ засѣданіяхъ ученыхъ обществъ, въ популярномъ изложеніи,—и еженедѣльно: ВОСКРЕСНЫЕ НАБРОСКИ—фельетонъ московской жизни, ПЕТЕРБУРСКАЯ НЕДѢЛЯ—фельетонъ петербургской жизни, БЕСѢДЫ СТАРАГО ТЕАТРАЛА—театральный фельетонъ.

Годовымъ подписчикамъ будетъ высланъ отдѣльной книгой романъ: „Купленный мужъ“ — *В. Рикаля.*

ПОДПИСНАЯ ЦѢНА НА 1889 Г.:

	На 12 м.	На 11 м.	На 10 м.	На 9 м.	На 8 м.	На 7 м.	На 6 м.	На 5 м.	На 4 м.	На 3 м.	На 2 м.	На 1 м.
Съ доставкою въ Москвѣ	8 —	7 50	7 —	6 50	6 —	5 50	5 —	4 50	3 70	2 90	1 90	1 —
Съ пересылкой въ города	9 —	8 50	8 —	7 —	6 50	6 —	5 50	5 —	4 —	3 —	2 —	1 —
Съ пересылкой за границу	13 —	12 90	12 —	10 90	9 70	8 80	7 90	6 70	5 60	4 70	3 —	1 60

Адресъ: Москва, контора газ. „НОВОСТИ ДНЯ“ *Ред.-изд.* А. Липскеровъ.

3—2

Дозволено цензурою. Тифлисъ, 21-го Декабря 1888 г. Տպարան Կավկազ լրագրի դրատեղեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова